ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

,, 07 ,, ...11..... 2012 թվականի N ...92-Ա.....

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի <<Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովների ձևավորման, գործունեության կարգը և նրանց գործառույթները սահմանելու մասին>> № 844-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի պահանջի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունում ստեղծել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Էդ. Շախկյան	աշխատակազմի ղեկավարի տեղակալ (նախագահ)
Զ. Գրիգորյան	էներգետիկայի պետական տեսչության պետ
Հ. Եզակյան	ընդերքի տրամադրման գործակալության պետի տեղակալ
Ա. Մարգարյան	քարտուղարության պետ
Ն. Սարգսյան	անձնակազմի կառավարման բաժնի պետ (քարտուղար):

2. Հանձնաժողովին՝ գործունեությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 26-ի <<Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովների ձևավորման, գործունեության կարգը և նրանց գործառույթները սահմանելու մասին>> № 844-Ն որոշման համաձայն:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ